ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 126

ՅՈՒՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ ՔՕ 627-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ, 64-րդ և 66-րդ հոդվածներով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերով, Լերմոնտովո համայնքի ավագանու 18.07.2025 թ-ի թիվ 31 որոշումով, թիվ 160062025-06-0074 վարձակալության վկայականը, հիմք ընդունելով նախկին վարձակալ Յուրի Սերյոժայի Համբարյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տալ համաձայնություն Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-043-0228-0056 ծածկագրով 0,5907հա երկրորդ կարգի "խոտհարք" գործառնական նշանակության 1181400 ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել նախկին վարձակալ Յուրի Սերյոժայի Համբարյանին:

2.Յուրի Սերյոժայի Համբարյանի հետ մեկամսյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 127

ԳՈՌ ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենքդրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով Գոռ Աշոտի Խաչատրյանի դիմումը, Լերմոնտովո համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991 թ-ի թիվ 4 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, հիմք ընդունելով "ԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ" ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական՝ 0472 2023-05-17/ անշարժ գույքի համար կազմված հատակագիծը՝ ծածկագիր՝ 2025SZC52S

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համաձայն Հողային Օրենսգրքի 64-րդ հոդվածի հաստատել Գոռ Խաչատրյանին պատկանոց ԼՄ Լերմոնտովո համայնքում գտնվող 06-043-0115-0011 կադաստրային ծածկագրով 0,0590հա հողամասից ավել մինչև 20% փաստացի զբաղեցրած 0,0026հա հողամասը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Ճանաչել օրենքի ուժով Գոռ Աշոտի Խաչատրյանի սեփականության իրավունքը 06-043-0115-0011 կադաստրային ծածկագրով 0,06160հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3.Ուժը կորցրած ճանաչել ԼՄ Լերմոնտովո համայնքի ղեկավարի 01/08/2025 թ-ի թիվ 123 որոշումը:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**